

ԳՈՐԾԻ ԱՐԴԱՐԱՑԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՈՐՊԵՏ ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՈՒ

Կարեն Հակոբյան

*ԵՊՀ սահմանադրական իրավունքի
ամբիոնի ասպիրանտ*

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության¹ 50-րդ հոդվածի 1-ին մասը, ամրագրելով, որ. «Յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք», դրանով իսկ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգ է ներմուծել վարչական իրավունքի գիտությանը հայտնի, այսպես կոչված, «հոգատարության սկզբունքը» (*“the principle of care”*): Պատշաճ վարչարարության էությունը և դրա անբակտելի մասը կազմող այս իրավական սկզբունքի բովանդակությունն առաջին հերթին դրսևորվում են վարչական մարմիններին ներկայացվող՝ գործերի քննության արդարացիության և անաչառության պահանջների միջոցով, որոնք բխում են իրավական որոշակիության սկզբունքից՝ վարչարարության ոլորտում երաշխավորելով որոշումների կայացման կանխատեսելիության ու օրենքի միատեսակ կիրառության հաստատումն ու հետագա զարգացումը:

Արդարության սկզբունքը, որը հայտնի է նաև բնական արդարադատության կամ արդարացիության (*“equity”*) սկզբունքներ անվանմամբ, կոչված է երաշխավորելու ընդհանուր վստահությունը վարչարարության պատշաճության նկատմամբ: Այն ընկալվում է որպես հիմնարար իրավական սկզբունք, որն էական նշանակություն ունի մասնավոր անձանց և հանրային իշխանության հարաբերություններում վստահության և կանխատեսելիության մթնոլորտ ստեղծելու հարցում²:

Արդարացի վարչարարության պահանջը տարածվում է վարչական մարմինների գործունեության բոլոր կողմերի վրա. այն ունի համընդգրկուն բնույթ, պատշաճ վարչարարության իրավունքի մյուս բոլոր բաղադրատարրերի հիմքն է և առաջին հերթին ենթադրում է վարչական մարմինների կողմից համաչափության, հավասարության պահպանում, ինչպես նաև հարգանք մասնավոր անձանց իրավական ակնկալիքների նկատմամբ³: Իրավաչափության և արդարացիության փոխհարաբերությունները դեռևս հնագույն ժամանակներից ուսումնասիրվում են իրավունքի փիլիսոփայության կողմից. օրինակ Արիստոտելը պնդում էր, որ արդարության միջոցով պետք է շտկել օրենքի սխալները⁴: Այս իմաստով արդարության սկզբունքը զուտ իրավաբանական հասկացություն չէ, և իրավաչափ վարքագիծը ոչ բոլոր դեպքերում է համարվում արդարացի:

Իրավաբանական գրականությունում ընդգծվում է, որ վարչարարությունը համարվում է արդարացի այն դեպքում, երբ վարչական մարմինը ոչ միայն պահպանում է օրենսդրության պահանջները, այլ նաև ստեղծում է իրավահավասարության և հավասարակշռվածության մթնոլորտ: Այս առումով արդարությունը պետք է դի-

¹ Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

² Տե՛ս **Koen Lenaerts**, “In the Union We Trust: Trust-Enhancing Principles of Community Law”, *Common Law Market Review* (41), 2004, էջեր 317-343:

³ Տե՛ս **Jill Wakefield**, *The Right to Good Administration* (European Monographs), Alphen aan den Rijn, Kluwer Law International, 2007, էջեր 70-72:

⁴ Տե՛ս **Аристотель** - Сочинения в четырех томах. Том 1, М.: Мысль, 1976, էջեր 168-169:

տարկել որպես իրավական նորմի կիրառման անհրաժեշտ պայման, որի միջոցով վարքագծի ընդհանուր կանոնը համապատասխանեցվում է քննության առարկա հանդիսացող որոշակի գործի առանձնահատկություններին: Այսինքն՝ արդարության սկզբունքը վարչական մարմիններին ներկայացնում է իրավական կարգադրագրերի զուտ մեխանիկական կիրառությունից ձեռնպահ մնալու և որոշակի գործի հանգամանքներից ելնելով՝ որոշակի ձկունություն ցուցաբերելու պահանջ: Այս իմաստով արդարության սկզբունքը միտված է մեղմելու կամ նույնիսկ շրջանցելու իրավահավասարության սկզբունքը¹:

Արդարացի վարչարարության վերոհիշյալ մոտեցումը պետք է ցուցաբերվի հատկապես այն դեպքում, երբ իրավական այս կամ այն նորմի ճշգրիտ (զուտ մեխանիկական) կիրառումը կարող է հանգեցնել գործի անարդար ելքի: Ասվածը կարևոր նշանակություն է ձեռք բերում վարչական մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների կիրառման ոլորտում: Այսպես, օրենսդիրը 06.11.2000 թվականին ընդունված «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով² նույն օրենքի խախտման համար կիրառվող պատասխանատվության միջոցի (տուգանք կամ նախազուլացում) ընտրության, ինչպես նաև որպես պատասխանատվության միջոց ընտրված տուգանքի չափի որոշման հարցում տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին օժտել է հայեցողական լիազորություններով: Անձի պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի բաղադրիչ հանդիսացող գործի արդարացի քննության սկզբունքից հետևում է, որ տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու բնագավառում օրենքով նախատեսված վերոգրյալ հայեցողական լիազորություններն իրականացնելիս հիշյալ հանձնաժողովը՝ որպես վարչական մարմին, պարտավոր է առաջնորդվել այն գաղափարով, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իր կողմից կիրառվող պատասխանատվության միջոցը պետք է լինի արդարացի. այն պետք է համապատասխանի սովորական գործի առանձնահատկություններին և ապահովի ողջամիտ հավասարակշռություն կիրառվող միջոցի ու դրանով հետապնդվող նպատակի միջև: Երաշխավորելով պատշաճ վարչարարության նկատմամբ հանրության վստահության ամրապնդումը³:

Ի տարբերություն պատշաճ վարչարարության իրավունքի մյուս երաշխիքների՝ վարչական մարմինների կողմից գործի արդարացի քննության սկզբունքն օժտված է խիստ որոշակի բովանդակությամբ և ունի մնացորդային չափանիշի հատկանիշ. այն թույլ է տալիս ընդլայնել պատշաճ վարչարարության իրավունքի ծավալը՝ դրանք ներառելով այդ հիմնարար իրավունքի համար էական նշանակություն ունեցող որոշ այլ որակներ, որոնք սահմանված չեն հիմնական օրենքով, ինչպես նաև գնահատել վարչարարության պատշաճությունն իր ամբողջականության մեջ՝ անկախ պատշաճ վարչարարության իրավունքի՝ Սահմանադրությամբ երաշխավորված որևէ բաղադրատարրի խախտման առկայությունից կամ բացակայությունից:

Մի կողմից, գործի արդարացի քննության սկզբունքի համաձայն՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց առնչվող ցանկացած վարչական ընթացակարգ պետք է իր ամբողջականության մեջ համապատասխանի ոչ միայն պատշաճ վարչարարության իրավունքի՝ Սահմանադրությամբ ամրագրված առանձին տարրերին, այլ նաև արդարացիության ընդհանուր պահանջին: Պատշաճ վարչարարության իրա-

¹ Տե՛ս **Julie Dupont-Lassalle**, *Le Principe de Bonne Administration en Droit de l'Union Européenne*, University Paris II-Panthéon Assas, Bruylant, 2013, էջեր 244, 255:

² Տե՛ս ՀՀՊՏ 2000.12.15/30(128):

³ Նմանատիպ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի թիվ ԿԴ/6329/05/12 վարչական գործով 22.04.2016 թվականին կայացված որոշմամբ:

վունքի այս բաղադրիչը, փաստորեն, հնարավորություն է ընձեռում գնահատելու վարչական վարույթի իրավաչափությունն իր ամբողջականության մեջ: Այլ կերպ ասած, այս կամ այն վարչական վարույթը կարող է ոչ իրավաչափ ճանաչվել անգամ այն դեպքում, երբ վարչական մարմինը թույլ չի տվել պատշաճ վարչարարության իրավունքի մյուս տարրերից որևէ մեկի խախտում, սակայն վերջինիս իրականացրած վարչական վարույթը՝ որպես ամբողջական ընթացակարգ, չի համապատասխանում արդարացիության ընդհանուր չափանիշին:

Մյուս կողմից, պատշաճ վարչարարության իրավունքի՝ գործի արդարացի քննության բաղադրիչի միջոցով այդ սահմանադրական իրավունքի բովանդակությունը լրացվում է մի շարք այլ իրավունքներով և ելակետային գաղափարներով, որոնցից են մասնավորապես՝

- 1) վարչական վարույթին արդյունավետ մասնակցության իրավունքը,
- 2) «զենքերի հավասարության» սկզբունքը,
- 3) հիմնավորված վարչական ակտ ստանալու իրավունքը,
- 4) անմեղության կանխավարկածը,
- 5) ապացուցումը վարչական վարույթում,
- 6) իրավական որոշակիության սկզբունքը և այլն:

Վարչական վարույթին արդյունավետ մասնակցության իրավունքը ենթադրում է, որ պատշաճ վարչարարության իրավունքի միջոցով երաշխավորվում է ոչ միայն վարչական վարույթի ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձանց լսված լինելը, որը քննարկվող հիմնարար իրավունքի առանձին բաղադրատարր է, այլ նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց արդյունավետ մասնակցությունը վարչական վարույթին: Այսինքն՝ վարչական մարմինները պարտավոր են ապահովել անհրաժեշտ պայմաններ վարույթի մասնակիցների կողմից իրենց ընթացակարգային իրավունքներից արդյունավետ օգտվելու համար: Այդպիսի պայմաններից են, օրինակ, վարույթի ընթացքում կազմակերպվող անհրաժեշտ միջոցառումների անցկացման տեղի, օրվա և ժամի մասին վարույթի մասնակիցներին պատշաճ ծանուցելը, վարույթի ընթացքում անցկացվող լսումների համար անհրաժեշտ շենքային պայմանների ապահովումը, ֆիզիկական արատ ունեցող անձանց համար լսումներին արդյունավետ մասնակցելու համար հնարավորինս հարմարավետ պայմանների ապահովումը, լսումների ընթացքում վարույթի մասնակիցներին իրենց ներկայացուցիչների հետ խորհրդապահական կարգով հաղորդակցվելու հնարավորության ընձեռումը և այլն:

«Չենքերի հավասարության» սկզբունքը մարմնավորում է հակադիր շահերով օժտված վարույթի մասնակիցների իրավունքների և պարտականությունների միջև արդարացի հավասարակշռության գաղափարը և բխում է օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական դրույթից: Նշված սկզբունքը նշանակում է, որ հակադիր շահերով օժտված կողմերի (վարչական ակտի հասցեատեր և երրորդ անձինք) մասնակցությամբ ընթացող վարչական վարույթների ընթացքում վարչական մարմինը պարտավոր է յուրաքանչյուր կողմին ընձեռել իր փաստարկներն ու ապացույցները ներկայացնելու ողջամիտ հնարավորություն այնպիսի պայմաններով, որոնք վերջինիս չեն դնում էական անբարենպաստ իրավիճակի մեջ իր հակառակորդի նկատմամբ (*vis-à-vis*): Այլ կերպ ասած՝ պատշաճ վարչարարության իրավունքի այս բաղադրիչի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են հակադիր շահերով օժտված վարույթի մասնակիցներին իրենց ընթացակարգային իրավունքներն իրացնելու կապակցությամբ ապահովել հավասար հնարավորություններով առանց առավելություն տալու կողմերից մեկին:

Հիմնավորված վարչական ակտ ստանալու իրավունքը ենթադրում է, որ վարչական մարմինը պարտավոր է պատշաճ կերպով հիմնավորել իր կողմից ընդուն-

ված միջամտող վարչական ակտը¹: Հակառակ պարագայում վարչական մարմինների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց առնչվող գործի քննությունը չի կարող համապատասխանել արդարացիության չափանիշին, քանի որ արդարացի քննության հասկացությունը՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրիչ, վերաբերում է ոչ միայն վարչական ընթացակարգին, այլ նաև այդ ընթացակարգի արդյունքում ընդունված որոշումների էությանն ու բովանդակությանը:

Անմեղության կանխավարկածը վերաբերում է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթին և այդ վարույթի էությունը կանխորոշող ելակետային սկզբունքներից մեկն է: Այսպես, վարչական իրավունքի շրջանակներում անմեղության կանխավարկածը նշանակում է, որ անձը չի կարող համարվել վարչական իրավախախտում կատարած, քանի դեռ իրավասու մարմնի վերջնական որոշմամբ չի հաստատվել, որ նա կատարել է վարչական իրավախախտում: Բացի այդ, նշված սկզբունքից բխում է, որ անձը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, իսկ յուրաքանչյուր չփարատված կասկած մեկնաբանվում է հօգուտ այն անձի, ում վերագրվում է վարչական իրավախախտման կատարումը:

Թեև անմեղության կանխավարկածը վարչական իրավունքի գիտության մեջ հետևողականորեն դիտարկվում է որպես վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի կարևորագույն սկզբունք², սակայն 06.12.1985 թվականին ընդունված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը³ անմեղության կանխավարկածի վերաբերյալ որևէ դրույթ չի նախատեսում: Նշված իրավիճակը շտկելու փորձ է կատարվել իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների ցանկով⁴ նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծի մշակմամբ, որտեղ առանձին հոդվածով ամրագրվել է անմեղության կանխավարկածի՝ որպես վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի հիմնական սկզբունքի բովանդակությունը⁵:

Այսպիսով, անմեղության կանխավարկածի սկզբունքը վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի արդարացի քննության բաղադրատարրերից մեկն է, և դրա օրենսդրական ամրագրումն ու իրավակիրառ պրակտիկայում հետևողական իրացումն ունեն հրատապ նշանակություն ՀՀ իրավական համակարգում պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի լիարժեք երաշխավորման համար:

Ապացուցումը վարչական վարույթում վարչական մարմինների և վարույթի մասնակիցների այն գործունեությունն է, որն ուղղված է գործի ըստ էության քննության և ճիշտ լուծման համար նյութական օրենսդրության նորմերով արժեքավորվող

¹ Հիմնավորված վարչական ակտ ստանալու իրավունքի մասին առավել մանրամասն տե՛ս **Կարեն Հակոբյան**, Գրավոր վարչական ակտերի հիմնավորման պահանջը՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրատարր, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու / ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ: Խմբ. Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ իրատ., 2017, էջեր 72-90:

² Տե՛ս, օրինակ, **Ղանիեյան Աղորգ**, Վարչական պատասխանատվություն - Եր.: ԱՌՏ, 2007, էջեր 157-158:

³ Տե՛ս ՀՍՍՀԳՍ 1985/23:

⁴ Տե՛ս ՀՀ Նախագահի 30.06.2012 թվականի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ա կարգադրություն, ՀՀՊՏ 2012.07.11/33(907) Հոդ.827:

⁵ Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծի տեքստը տե՛ս ըստ <https://www.e-draft.am/projects/274> կայքէջում:

իրավաբանական փաստերի առկայության կամ բացակայության մասին հավաստի գիտելիքների ձեռքբերմանը: Այն պատշաճ վարչարարության կարևորագույն ինստիտուտներից մեկն է, քանի որ այս կամ այն գործով վարչական մարմինի կողմից կիրառված միջոցը կարող է իրավաչափ համարվել միայն տվյալ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող իրավաբանական փաստերի առկայության կամ բացակայության հաստատման դեպքում, որն էլ կատարվում է վարչական ապացուցման միջոցով:

Թեև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը որևէ հատուկ նշում չի պարունակում վարչական վարույթում ապացուցման կանոնների վերաբերյալ, սակայն ապացուցման գործընթացը պետք է համապատասխանի պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի բաղադրիչ հանդիսացող գործի արդարացի քննության սկզբունքի պահանջներին, որոնք հանգում են հետևյալին. *վարչական մարմինների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց առնչվող յուրաքանչյուր գործով ապացուցման առարկան կազմող բոլոր փաստերի առկայությունը կամ բացակայությունը պետք է հաստատվի թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների բավարար համակցությամբ:*

Ապացույցների թույլատրելիության հատկանիշը վերաբերում է ապացույցները ձեռք բերելիս օրենքով նախատեսված ձևական-ընթացակարգային պահանջների պահպանվածությանը և ենթադրում է. (ա) աղբյուրի օրինականություն՝ ապացույցը պետք է ձեռք բերվի միայն օրենքով սահմանված աղբյուրներից, (բ) ձեռքբերման միջոցների օրինականություն՝ պետք է պահպանված լինեն ապացույցների ձեռքբերմանն ուղղված գործողություններ կատարելուն օրենքով առաջադրված պահանջները, (գ) պատշաճ ձևակերպում՝ ապացույցը, դրա ձեռքբերման գործընթացը պետք է օրենքով սահմանված կարգով ենթարկվեն պատշաճ ձևակերպման, (դ) լիազորված սուբյեկտ՝ ապացույցը պետք է ստացված լինի ապացույց ձեռք բերելու լիազորությամբ օժտված պաշտոնատար անձի կողմից:

Ապացույցների վերաբերելիության հատկանիշն արտացոլում է ապացույցի և գործի քննության ու լուծման համար նշանակություն ունեցող փաստերի միջև կապը. այն ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքները հաստատելու կամ հերքելու՝ ապացույցի «ունակությունն» է: Այսինքն՝ ապացույցը համարվում է վերաբերելի, եթե տեղեկություն է պարունակում վարչական մարմինների կողմից քննվող գործի համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի մասին:

Ապացույցների արժանահավատության հատկանիշը բնութագրում է դրանց հավաստիությունն ու հստակությունը. արժանահավատ է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Ապացույցն արժանահավատության տեսանկյունից գնահատելիս վարչական մարմինը պետք է հիմք ընդունի հետևյալ հանգամանքները. (ա) ապացույցի աղբյուրի հատկանիշները, (բ) ապացույցի ձևավորման հանգամանքները, (գ) ապացուցողական տեղեկությունը ձեռք բերելու միջոցը, (դ) ապացույցի բովանդակությունը կազմող տեղեկությունը հաստատող կամ հերքող հանգամանքների առկայությունը, (ե) նույն տեղեկության ստացումն այլ աղբյուրից: Ընդ որում, յուրաքանչյուր ապացույց արժանահավատության տեսանկյունից պետք է գնահատվի բոլոր ապացույցների համակցության մեջ՝ համադրելով դրա բովանդակությունն այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների և վարչական գործում առկա փաստական տվյալների հետ:

Ապացույցների բավարարությունը գործով ձեռք բերված ապացույցների այնպիսի համակցություն է, որը քանակական և որակական առումներով վարչական մարմնին հնարավորություն է տալիս վերջնական եզրահանգում կատարել ապա-

ցուցման առարկայի յուրաքանչյուր տարրի վերաբերյալ և ապահովել իր կողմից ընդունված որոշման իրավաչափությունն ու հիմնավորվածությունը¹:

Այսպիսով, պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի բաղադրիչ հանդիսացող գործի արդարացի քննության սկզբունքից բխում է, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց առնչվող գործերը կարող են լուծվել միայն տվյալ գործով հավաքված թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների բավարարության պայմաններում՝ հաշվի առնելով նաև ապացուցման բեռի բաշխման՝ օրենքով նախատեսված կանոնները: Այդ իսկ պատճառով ֆիզիկական և իրավաբանական անձանց առնչվող գործերը քննելիս և լուծելիս վարչական մարմինը պարտավոր է թույլատրելիության, վերաբերելիության, արժանահավատության ու բավարարության տեսանկյունից գնահատման ենթարկել այն ապացույցները, որոնց վրա հիմնված են իր հետևությունները, ինչպես նաև ընդունված վարչական ակտում ամրագրել ապացույցների գնահատման արդյունքները՝ նշելով այս կամ այն ապացույցն անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ անարժանահավատ համարելու փաստարկները: Հակառակ դեպքում ապացույցների գնահատումը, դրա արդյունքում վարչական մարմնի համապատասխան ներքին համոզմունքի ձևավորումը կկրեն սուբյեկտիվ բնույթ, կհանգեցնեն կամայականության և անձի պատշաճ վարչարարության իրավունքի խախտման:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի բաղադրիչ հանդիսացող գործի արդարացի քննության սկզբունքը խախտվում է այն դեպքում, երբ որոշակի էական փաստական հանգամանքի առկայության կամ բացակայության մասին վարչական մարմնի եզրահանգումները հիմնվում են միայն անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ անարժանահավատ ապացույցների վրա: Իսկ եթե առկա են միևնույն փաստական հանգամանքը հաստատող թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցներ, ապա վարչական մարմնի ընդունած որոշումը չի կարող ոչ իրավաչափ ճանաչվել՝ անկախ անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ անարժանահավատ ապացույցների օգտագործման հանգամանքից: Այլ կերպ ասած՝ վարչական մարմինների կողմից վերոգրյալ չափանիշներին չհամապատասխանող ապացույցի օգտագործումը կարող է հանգեցնել պատշաճ վարչարարության իրավունքի խախտման, եթե վարչական մարմնի կողմից ընդունված որոշումը հիմնվում է բացառապես անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ անարժանահավատ ապացույցների վրա:

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչարարության ոլորտում ապացուցման վերոգրյալ կանոնները չեն ստացել իրենց համարժեք կարգավորումը ոչ 18.02.2004 թվականին ընդունված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով², ոչ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանող օրենքներով: Օրենսդրական կարգավորման նշված բացի պատճառով իրավակիրառ պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ վարչական մարմինների կողմից ընդունված միջամտող վարչական ակտերը, հիմնված չլինելով տվյալ գործով ապացուցման առարկան կազմող փաստերի առկայությունը կամ բացակայությունը հաստատող թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների բավարար համակցության վրա, դա-

¹ Տե՛ս mutatis mutandis, *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի վերաբերյալ թիվ ԵԿԿ/0252/01/13 քրեական գործով* ՀՀ վճռաբեկ դատարանի 31.10.2014 թվականի որոշումը:

² Տե՛ս ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ.413:

տական բողոքարկման արդյունքում ոչ իրավաչափ չեն ճանաչվում¹: Նման պայմաններում անձի պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի բաղադրիչ հանդիսացող գործի արդարացի քննության սկզբունքից բխող ապացուցման վերոգրյալ չափանիշներն անհրաժեշտաբար պետք է իրենց օրենսդրական ամրագրումը ստանան նշված օրենքներում և պահպանվեն ինչպես վարչական ակտերի ընդունման, այնպես էլ դրանց իրավաչափության ստուգման ընթացակարգերի շրջանակներում:

Իրավական որոշակիության սկզբունքը պատշաճ վարչարարության իրավունքի համատեքստում դրսևորվում է վարչական մարմինների կողմից ընդունված և ուժի մեջ մտած որոշումների պարտադիրության ինստիտուտի տեսքով. այն առաջին հերթին ենթադրում է, որ ուժի մեջ մտած վարչական ակտը պարտադիր է ոչ միայն վարույթի մասնակիցների, այլ նաև այն ընդունած վարչական մարմնի համար: Թեև ՀՀ Սահմանադրությունն ուղղակիորեն չի ամրագրում վարչական ակտի պարտադիրությունը՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրիչ, սակայն այդ հիմնարար իրավունքը չի կարող գործնականում ապահովվել, եթե վարչական մարմինը պատշաճ վարչարարության իրավունքի բոլոր տարրերի պահպանմամբ քննի և լուծի ֆիզիկական ու իրավաբանական անձանց ամնչվող գործերը, բայց այդ գործերի լուծման արդյունքում կայացված և ուժի մեջ մտած վարչական ակտերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում չունենան պարտադիր իրավաբանական ուժ: Հետևաբար, պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի բաղադրիչ հանդիսացող գործի արդարացի քննության սկզբունքից բխում է, որ ուժի մեջ մտած վարչական ակտը պետք է օժտված լինի պարտադիր իրավաբանական ուժով թե՛ վարչական ակտի հասցեատիրոջ և վարույթի մյուս մասնակիցների, թե՛ այն ընդունած վարչական մարմնի, թե՛ այդ վարչական ակտի գործողության ոլորտում հայտնված մյուս սուբյեկտների (այդ թվում նաև՝ հանրային-իշխանական) համար:

Վարչական ակտի պարտադիրության նախապայմանը դրա՝ ուժի մեջ մտած լինելն է, քանի որ վարչական ակտը կարող է իրավաբանական հետևանքներ առաջացնել միայն ուժի մեջ մտնելուց հետո: Որպես կանոն՝ վարչական ակտն ուժի մեջ է մտնում կամ այլ կերպ՝ ծագում է, ի հայտ է գալիս պետության իրավական համակարգում վարչական ակտի ընդունման մասին դրա հասցեատիրոջ իրազեկելուն հաջորդող օրվանից²: Փաստորեն, միայն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ

¹ Տե՛ս, օրինակ, *անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության Շենգակիթի հարկային տեսչության թիվ ՎԴ/6872/05/14 վարչական գործով* ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը: Այս դատական գործի ուսումնասիրությունից հետևում է, որ վարչական մարմինը տնտեսվարող սուբյեկտի մոտ իրականացված ստուգման արդյունքում ընդունել էր արտոնագրային վճարի գծով լրացուցիչ հարկային պարտավորություններ առաջադրող վարչական ակտ: Սակայն վարչական վարույթի (ստուգման) ընթացքում վարչական մարմինը ձեռք չէր բերել բավարար ապացույցներ արտոնագրային վճարի չափը որոշելու համար հիմք հանդիսացող ելակետային տվյալների իրական մեծության վերաբերյալ արտոնագրային վճարի գծով լրացուցիչ հարկային պարտավորություններ առաջադրող վարչական ակտի հիմքում դնելով միայն տնտեսվարող սուբյեկտի կողմից տրված բացատրությունը: Մինչդեռ ՀՀ վճռաբեկ դատարանն այդ վարչական ակտի հիմքում դրված ապացույցների անբավարարության պայմաններում այն համարել է իրավաչափ՝ անտեսելով անձի պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի բաղադրիչ հանդիսացող գործի արդարացի քննության սկզբունքից բխող ապացուցման վերոգրյալ չափանիշները:

² Տե՛ս «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասը:

մտնելուց հետո է, որ վարչական ակտը ձեռք է բերում պարտադիրության հատկանիշ, որը դիտարկվում է երկու առումով՝ ձևական և նյութական:

Վարչական ակտի *ձևական* պարտադիրությունը նշանակում է, որ վարչական ակտը չի կարող վիճարկվել և վերացվել վարչական կամ դատական կարգով: Այսինքն՝ վարչական ակտի ձևական պարտադիրությունը հանգում է այդ վարչական ակտի անբողոքարկելիությանը: Որպես կանոն՝ վարչական ակտը դառնում է անբողոքարկելի դրա ուժի մեջ մտնելուց երկու ամիս հետո, եթե այն այդ ընթացքում չի բողոքարկվել վարչական կամ դատական կարգով¹: Վարչական ակտի *նյութական* պարտադիրությունը (*“res judicata”*) նշանակում է, որ այլևս անբողոքարկելի դարձած վարչական ակտն ունի տվյալ գործը լուծող հանրային-իշխանական վերջնական որոշման նշանակություն: Այն պարտադիր է վարչական ակտի հասցեատիրոջ, վարույթի մյուս մասնակիցների և այն ընդունած վարչական մարմնի համար:

Փաստորեն, ուժի մեջ մտած վարչական ակտը պարտադիր է բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու մասնավոր անձանց համար, և վերջիններս չեն կարող կասկածի տակ դնել այդ վարչական ակտի իրավաչափությունը, քանի դեռ այն ոչ իրավաչափ չի ճանաչվել իրավասու մարմնի կողմից. ուժի մեջ մտած վարչական ակտը գործում է իրավակարգում՝ անկախ դրա իրավաչափ լինելու կամ չլինելու հանգամանքից²: Նշված գաղափարը Հայաստանի Հանրապետության իրավակիրառ պրակտիկայում իր արտացոլումն է ստացել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից մշակված՝ վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի միջոցով, որի համաձայն՝ բոլոր դեպքերում վարչական ակտը համարվում է իրավաչափ, եթե այն օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել³:

Այնուամենայնիվ վարչական ակտի պարտադիրության *res judicata* սկզբունքն իր բովանդակությամբ չի կարող նույնացվել օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի պարտադիրության սկզբունքի հետ, քանի որ վարչական ակտի պարտադիրությունը գործում է մի շարք էական վերապահումներով ու բացառություններով:

Այդ բացառություններից մեկը վերաբերում է այնպիսի ակնհայտ կոպիտ խախտումներով ընդունված վարչական ակտերին, որոնք, որպես այդպիսին, իրավունքի տեսանկյունից գոյություն չունեն և իրենց ընդունման պահից սկսած չեն կարող առաջացնել իրավական հետևանքներ, այսինքն՝ առաջինը են: ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վարչական ակտի առաջինը լինելու հանգամանքը պայմանավորված է ակնառու կոպիտ խախտումով, որոնք ի հայտ են գալիս առանց տվյալ վարչական ակտի իրավաչափությունը հատուկ ընթացակարգով ստուգելու և գնահատելու անհրաժեշտության և բացառում են տվյալ ակտի առաջինը լինելու վերաբերյալ հնարավոր վեճերը: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ առաջինը վարչական ակտերն այդպիսին են հանդիսանում հենց օրենքի ուժով, ինչն իրավունքի սուբյեկտին չի պարտադրում բողոքարկել նման վարչական ակտերը և դրա արդյունքում ունենալ վարչական ակտի առաջինը լինելու հանգամանքի հաստատման վերաբերյալ իրավասու մարմինների կողմից կայացված որոշում, իսկ առաջինը վարչական ակտի կատարումը կամ կիրառումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն: Ըստ այդմ, ՀՀ սահմանադրական դատարանը հանգել է այն եզրակացության, որ վարչական մարմնի կողմից մեկ այլ վարչական մարմնի ընդունած

¹ Տե՛ս «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածը և 05.12.2013 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1 Հոդ.1186.1) 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ:

² Տե՛ս German Administrative Law in Common Law Perspective / Mahendra P. Singh. – 2. ed. – Berlin: Springer, 2001 էջեր 80-81:

³ Տե՛ս, օրինակ, *Կոբով Փիլոյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և այլոց թիվ ԿԴ/2085/05/12 վարչական գործով* ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը:

վարչական ակտի առջինն չլինելու հանգամանքի ստուգումը և գնահատումը ոչ միայն իրավաչափ են, այլ նաև անհրաժեշտ են և պարտադիր¹: Հետևաբար, առջինն վարչական ակտերը՝ անկախ իրավասու մարմնի կողմից այդպիսին ճանաչված լինելու կամ չլինելու հանգամանքից, օժտված չեն պարտադիրության հատկանիշով:

Վարչական ակտի պարտադիրության *res judicata* սկզբունքից հաջորդ բացառությունն այն է, որ օրենքով սահմանված որոշակի պայմանների առկայության դեպքում վարչական մարմինը կարող է սեփական նախաձեռնությամբ անվավեր ճանաչել իր կողմից ընդունված և անբողոքարկելի դարձած ոչ իրավաչափ վարչական ակտը կամ ուժը կորցրած ճանաչել իրավաչափ վարչական ակտը²: Ընդ որում, ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու և իրավաչափ վարչական ակտը ուժը կորցրած ճանաչելու վարչական մարմնի լիազորությունները սահմանափակված են բարենպաստ վարչական ակտի գոյության նկատմամբ դրա հասցեատիրոջ ունեցած վստահության իրավունքով³: Քննարկվող սկզբունքից մեկ այլ բացառություն է վարչական ակտի ընդունմամբ ավարտված վարչական վարույթի մասնակիցների դիմումի հիման վրա այդ վարույթը վերսկսելու և անբողոքարկելի վարչական ակտը փոփոխելու, անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածում նախատեսված կառուցակարգը, որը գործում է վարչական ակտի ընդունումից հետո դրա հիմքում դրված փաստական հանգամանքների կամ ակտի հասցեատիրոջ կարգավիճակի փոփոխության, նոր ապացույցների կամ նոր հանգամանքների ի հայտ գալու դեպքերում⁴:

Այսպիսով, վարչական ակտի պարտադիրության *res judicata* սկզբունքի բովանդակությունը հանգում է հետևյալին. առջինն չհանդիսացող և անբողոքարկելի դարձած վարչական ակտը պարտադիր է բոլորի համար. այդպիսի վարչական ակտը չի կարող փոփոխվել, անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվել այն ընդունած վարչական մարմնի կողմից, բացառությամբ օրենքով նախատեսված բացառիկ դեպքերի՝ հաշվի առնելով հանրային շահի և մասնավոր անձանց շահերի ողջամիտ հավասարակշռությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց առնչվող գործերի արդարացի քննության իրավունքը ենթադրում է, որ վարչական ընթացակարգերը պետք է իրենց ամբողջականության մեջ համապատասխանեն արդարացիության ընդհանուր պահանջին, ինչպես նաև պատշաճ վարչարարության իրավունքի բովանդակության մեջ հիմնական օրենքով հատկապես չնախատեսված այնպիսի չափանիշների, ինչպիսիք են վարչական վարույթին արդյունավետ մասնակցության իրավունքը, հիմնավորված վարչական ակտ ստանալու իրավունքը, «զենքերի հավասարության» սկզբունքը, անմեղության կանխավարկածը, վարչական վարույթում ապացուցման կանոնները, իրավական որոշակիության սկզբունքը և այլն:

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 04.02.2014 թվականի թիվ ՍԴՈ-1137 որոշումը, ՀՀՊՏ 2014.02.19/7(1020) Հոդ.70:

² Տե՛ս «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 65-րդ և 66-րդ հոդվածները:

³ Վստահության պաշտպանության սկզբունքի վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք / խմբ.՝ Հ. Թովմասյան, Օ. Լուխթերիանոթ, Գ. Մուրադյան, Վ. Պողոսյան, Վ. Ռայմերս, Ռ. Ռուբել – Եր.: Բավիղ, 2011, էջեր 276-280:

⁴ Տե՛ս German Administrative Law in Common Law Perspective / Mahendra P. Singh. – 2. ed. – Berlin: Springer, 2001 էջեր 91-92:

ПРАВО НА СПРАВЕДЛИВОЕ РАССМОТРЕНИЕ ДЕЛА, КАК ЭЛЕМЕНТ ПРАВА НА НАДЛЕЖАЩЕЕ УПРАВЛЕНИЕ

Карен Акопян

Аспирант кафедры конституционного права ЕГУ

Данная научная статья посвящена исследованию сущности и содержания права лица на справедливое рассмотрение своего дела, как фрагмента конституционного права на надлежащее управление. Автор выявляет основные характеристики справедливого администрирования и анализирует такие элементы справедливости, как право на эффективное участие в административном производстве, принцип равноправия сторон, презумпция невиновности, правила доказывания в административном производстве, принцип правовой определенности и т. д..

THE INDIVIDUAL'S RIGHT TO HAVE HIS OR HER AFFAIRS HANDLED FAIRLY, AS A COMPONENT OF THE RIGHT TO GOOD ADMINISTRATION

Karen Hakobyan

Post-Graduate student at the YSU Chair of Constitutional Law

This article is devoted to the research of the essence and content of the individual's right to have his or her affairs handled fairly, as a component of the fundamental right to good administration. The author reveals the main characteristics of fair administration and analyzes some elements of fairness - the right to effective participation in administrative proceedings, the "equality of arms", the presumption of innocence, the rules of proof in administrative proceedings, the principle of legal certainty, etc.

Բանալի բառեր – մարդու հիմնարար իրավունքներ, պատշաճ վարչարարություն, արդարացիություն, վարչական վարույթ, վարչական ակտ, անմեղության կանխա-վարկած, իրավական որոշակիություն, ապացույցներ

Ключевые слова: фундаментальные права человека, хорошая администрация, справедливость, административные процедуры, административный акт, презумпция невиновности, юридическая определенность, доказательства

Key words: fundamental rights, good administration, fairness, administrative proceedings, administrative act, presumption of innocence, legal certainty, evidence